ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ՌԵԿՏՈՐԱՏԻ ՈՐՈՇՈՒՄ

17.12. 2019թ.
Արձանագրություն թիվ 3

1. 2019-2020 ուս. տարվա սեպտեմբեր-նոյեմբեր ամիսներին ուսումնական պարապմունքներին ուսանողների հաճախումների և անհարգելի բացակայությունների վերաբերյալ.

1.1. Հանձնարարել բոլոր դեկաններին՝ դեկտեմբերի 26-ին ապահովել 2019-2020 ուս. տարվա սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսներին ուսումնական պարապմունքներից բացակայությունների ամբողջական մուտքագրումը համալսարանի կառավարման eBuh համակարգ:

1.2. 2019-2020 ուս. տարվա սեպտեմբեր-նոյեմբեր ամիսներին ուսումնական պարապմունքներից 60 % և ավելի անհարգելի բացակայություններ ունեցող ուսանողներին հեռացնել համալսարանից կամ, իրենց դիմումի համաձայն (2-4 կուրսեր), տեղափոխել հեռակա ուսուցման դեպարտամենտ, իսկ ավարտական կուրսերի 60 % և ավելի անհարգելի բացակայություններ ունեցող ուսանողներին հայտարարել խիստ նկատողություն:

1.2.1. ***Ագրոբիզնեսի և տնտեսագիտության ֆակուլտետի*** առկա ուսուցման «Ագրարային քաղաքականություն, խորհրդատվություն և տեղեկատվություն» կրթական ծրագրի անվճար ԲՀ համակարգի 2019/20 ուստարվա 2-րդ կուրսի ուսանող Ռոբերտ Արմենի Բաղդասարյանին տեղափոխել հեռակա ուսուցման դեպարտամենտի «Ագրոբիզնես» կրթական ծրագրի վճարովի համակարգի 2019/20 ուստարվա 2-րդ կուրս և թույլատրել հանձնել հետևյալ առարկայական տարբերությունները.

1. Այգեպտղաբուծություն - 18 ժամ, 4 կրեդիտ, ստուգարք,
2. Օտար լեզու – 27 ժամ, 6 կրեդիտ, ստուգարք:

Ագրոբիզնեսի և տնտեսագիտության ֆակուլտետի առկա ուսուցման «Ագրոէկոնոմիկա և սննդարդյունաբերության էկոնոմիկա» կրթական ծրագրի վճարովի համակարգի 2019/20 ուստարվա 4-րդ կուրսի ուսանող Ռոբերտո Մարկի Սաղաթելյանին տեղափոխել հեռակա ուսուցման դեպարտամենտի նույն կրթական ծրագրի վճարովի համակարգի 2019/20 ուստարվա 4-րդ կուրս:

Ագրոբիզնեսի և տնտեսագիտության ֆակուլտետի առկա ուսուցման 2019/20 ուստարվա 1-ին կիսամյակի սեպտեմբեր-նոյեմբեր ամիսների դասաժամերից 50% և

ավելի անհարգելի բացակայություններ ունեցող ավարտական կուրսերի ներքոհիշյալ ուսանողներին հայտարարել խիստ նկատողություն.

Հ/h	Ազգանուն, անուն, հայրանուն	Մասնագիտ., կուրս	Բացակայ., ժամ
1	Սաֆարյան Մյասնիկ Արսենի	ԱՔ - 5	148
2	Էլոյան Արմեն Մնացականի	ԱԷԿ - 5	104

1.2.2. ***Ագրոնոմիական ֆակուլտետի*** առկա ուսուցման 2019/2020 ուստարվա «Ագրոնոմիա» մասնագիտության «Բույսերի պաշտպանություն» կրթական ծրագրի 3-րդ կուրսի վճարովի համակարգի ուսանող **Ռազմիկ Սամվելի Դաբաղյանին**, ով համալսարան է ընդունվել տարկետման իրավունքով, 1-ին կիսամյակում դասավանդվող առարկաների ընդհանուր ժամաքանակից 50 % և ավելի անհարգելի բացակայությունների պատճառով (22 կրեդիտ), **հեռացնել համալսարանից**:

Ագրոնոմիական ֆակուլտետի առկա ուսուցման 2019/2020 ուստարվա «Բույսերի պաշտպանություն» մասնագիտության 5-րդ կուրսի վճարովի համակարգի ուսանող **Սերյոժա Ռազմիկի Սարգսյանին**, ով համալսարան է ընդունվել տարկետման իրավունքով, կիսամյակի ընդհանուր ժամաքանակից 60 % և ավելի անհարգելի բացակայությունների պատճառով, **հեռացնել համալսարանից**:

1.2.3. ***Պարենամթերքի տեխնոլոգիաների ֆակուլտետի*** 2019-2020 ուստարվա ‹‹Հացի, հրուշակեղենի և մակարոնի արտադրության տեխնոլոգիա›› մասնագիտության 4-րդ կուրսի վճարովի համակարգի ուսանողուհի Քրիստինե Կարենի Մանուկյանին 178 ժամ անհարգելի բացակայություններ ունենալու պատճառով հեռացնել համալսարանից:

Պարենամթերքի տեխնոլոգիաների ֆակուլտետի 2019-2020 ուստարվա ‹‹Հացի, հրուշակեղենի և մակարոնի արտադրության տեխնոլոգիա›› մասնագիտության 4-րդ կուրսի վճարովի համակարգի ուսանող Գարիկ Գառնիկի Առաքելյանին, ով պարտավորվել էր մինչև սույն թվականի նոյեմբերի 11-ը վճարել 3-րդ կուրսի ուսման վարձավճարը, ուսման վարձավճարի պարտքն ըստ պարտավորագրի՝ սահմանված ժամկետում չվճարելու և 192 ժամ անհարգելի բացակայությունների պատճառով հեռացնել համալսարանից:

Պարենամթերքի տեխնոլոգիաների ֆակուլտետի 2019-2020 ուստարվա ‹‹Խմորման արտադրության տեխնոլոգիա և գինեգործություն›› մասնագիտության 5-րդ կուրսի վճարովի համակարգի ուսանող Սարգիս Վարդանի Մանուկյանին 228 ժամ անհարգելի բացակայությունների պատճառով հեռացնել համալսարանից:

Պարենամթերքի տեխնոլոգիաների ֆակուլտետի առկա ուսուցման 2019-2020 ուստարվա 1-ին կիսամյակի սեպտեմբեր-նոյեմբեր ամիսներին մեծ թվով անհարգելի բացակայություններ ունեցող 5-րդ կուրսի ներքոհիշյալ ուսանողներին հայտարարել խիստ նկատողություն.

Հ/հ	Ազգանուն, անուն, հայրանուն	Մասնագիտություն, կուրս
1	Երկանյան Սերյոժա Հրաչի	‹‹Խմորման արտադրության տեխնոլոգիա և գինեգործություն››
2	Մենասյանս-Ալչեմոկի Արթուր Համլետի	
3	Հարությունյան Վահե Արմենի	
4	Մաթևոսյան Վահե Գագիկի	
5	Զալաքյան Կարեն Դանիելի	
6	Մավյան Պետրոս Վահեի	
7	Կարապետյան Էդգար Կարենի	
8	Աղաջանյան Կարեն Արթուրի	
9	Գալստյան Լևոն Կարենի	‹‹Գյուղ. հումքի և պար. փորձ., ստանդ. և սերտիֆ.››
10	Ծատուրյան Իշխան Գառնիկի	‹‹Պահածոյացման և սննդախտանյութերի տեխնոլոգիա››
11	Մինասյան Մարիամ Կարենի	
12	Բաղդասարյան Արսեն Սարգսի	
13	Մարգարյան Միսակ Հովհաննեսի	
14	Գևորգյան Գևորգ Ռուբենի	
15	Թովմասյան Հովհաննես Անդրանիկի	‹‹Հացի,հրուշակեղենի և մակարոնի արտադրության տեխնոլոգիա››
16	Ավանեսյան Վլադիմիր Գագիկի	
17	Վարդանյան Արման Հենրիկի	
18	Սամսոնյան Աշոտ Արթուրի	
19	Մարտիրոսյան Վալենտինա Մարգարի	
20	Աղաբեկյան Գևորգ Պարգևի	‹‹Կաթի և կաթնամթերքի տեխնոլոգիա››
21	Ղասաբյան Դիանա Հովհաննեսի	

1.3. 2019-2020 ուս. տարվա սեպտեմբեր-նոյեմբեր ամիսներին ուսումնական պարապմունքներից 50-60 % անհարգելի բացակայություններ ունեցող 1-4-րդ կուրսերի ուսանողներին հայտարարել խիստ նկատողություն:

1.3.1. ***Ագրոբիզնեսի և տնտեսագիտության ֆակուլտետի*** առկա ուսուցման 2019-2020 ուստարվա 1-ին կիսամյակի սեպտեմբեր-նոյեմբեր ամիսների դասաժամերից 50% և ավելի անհարգելի բացակայությունների (214 ժամ) համար ԱԷԿ – 3 կուրսի ուսանող **Հայկ Զավենի Նազարեթյանին հայտարարել խիստ նկատողություն:**

1.3.2. ***Ագրոնոմիական ֆակուլտետի*** 2019-2020 ուսումնական տարվա առկա ուսուցման ներքոհիշյալ ուսանողներին, 1-ին կիսամյակի ընդհանուր ժամաքանակից սեպտեմբերից նոյեմբեր ամիսներին մինչև 60 % անհարգելի բացակայելու պատճառով, հայտարարել **խիստ նկատողություն**.

1. Հովհաննիսյան Արթուր Արմենի- ԱԷ 1 (140 ժամ)
2. Մահլամյան Հովհաննես Կոլյայի- ԱՍԳ 3 (140 ժամ)
3. Գաբրիելյան Արման Արարատի- ԱՏ 4 (144 ժամ)
4. Օհանյան Բորիս Համլետի- ԲՊ 3 (136 ժամ)

1.3.3. 2019-2020 ուստարվա սեպտեմբեր-նոյեմբեր ամիսներին ուսումնական պարապմունքներից 50-60 % անհարգելի բացակայելու համար ***անասնաբուժական բժշկագիտության և անասնաբուծության ֆակուլտետի*** ներքոհիշյալ ուսանողներին հայտարարել ***խիստ նկատողություն.***

Հ/հ	Ազգանուն, անուն, հայրանուն	Մասնագիտ., կուրս	Բացակայ., ժամ
1	Ղասաբյան Սարգիս Գրիգորի	Անասնաբուժ. - 3	196
2	Ափյան Արթուր Հովհաննեսի	Անասնաբուժ. սան. փորձ. - 2	222
3	Մազմանյան Թամարա Գեորգիի	Անասնաբուժ. սան. փորձ. - 4	194

1.4. Մեկ առարկայի (կամ առարկաների) ուսումնական պարապմունքներից 50 % և ավելի անհարգելի բացակայություններ ունեցող ուսանողների համար տվյալ առարկան (կամ առարկաները) ձևակերպել պարտք և կազմակերպել կուրսի կրկնության դասընթացներ, եթե պարտքը չի գերազանցում ակադեմիական 12 կրեդիտի շեմը: Ակադեմիական 12 կրեդիտի շեմն անցնելու դեպքում կազմակերպել անհատական քննարկում և, հնարավորության դեպքում, տեղափոխել հեռակա ուսուցման դեպարտամենտ:

1.5. Հանձնարարել ուսումնամեթոդական կենտրոնի տնօրեն Դ. Հայրապետյանին, դեկաններին՝ սեղմ ժամկետում մշակել և ռեկտորատի քննարկմանը ներկայացնել մեկ առարկայի (կամ առարկաների) ուսումնական պարապմունքներից 50 % և ավելի անհարգելի բացակայություններ ունեցող ուսանողների տվյալ առարկայի (կամ առարկաների) կուրսի կրկնությունը կազմակերպելու մեխանիզմներ:

1.6. Հանձնարարել բոլոր ստորաբաժանումների ղեկավարներին, ուս. խորհրդի նախագահ Կ. Ղարախանյանին՝ ուսանողների հետ անցկացնել բացատրական աշխատանքներ՝ անհարգելի բացակայությունները նվազագույնի հասցնելու համար:

2. Համալսարանի հեռակա ուսուցման դեպարտամենտի 2016 թ. քառօրյա պատերազմի ժամանակ մարտական գործողության մասնակից կամ մարտական հերթապահություն իրականացրած ուսանողների ուսման վարձավճարների զեղչերի վերաբերյալ.

2.1. Հեռակա ուսուցման դեպարտամենտի վճարովի համակարգի 2016 թ. քառօրյա պատերազմի ժամանակ մարտական գործողության մասնակից 2019-2020 ուստարվա ներքոհիշյալ ուսանողների համար սահմանել տարեկան ուսման վարձի զեղչ 50 %-ի չափով.

Հ/հ	*Ազգանուն, անուն, հայրանուն*	*Մասնագիտություն, կուրս*
1	Գրիգորյան Հովսեփ Գեղամի	Խմորման. արտ. տեխն. - 3
2	Այունց Գուրգեն Էդիկի	Խմորման. արտ. տեխն. - 4
3	Հովհաննիսյան Կարո Անդրանիկի	Խմորման. արտ. տեխն. - 3
4	Հարությունյան Ռաֆիկ Գագիկի	Փոխ. և ճան. երթ. - 3
5	Խաչատրյան Սարգիս Անդրանիկի	Փոխ. և ճան. երթ. - 3
6	Հովհաննիսյան Տիգրան Արամի	Անտառ. տնտես. - 4
7	Գաբրիելյան Հայկ Դերենիկի	Անտառ. տնտես. - 4
8	Ջուլհակյան Ռաֆիկ Մանվելի	Կենս. անվտանգ. - 4
9	Զաքարյան Արգամ Ալբերտի	Հաշվ. հաշվ. - 3

2.2. Հեռակա ուսուցման դեպարտամենտի վճարովի համակարգի քառօրյա պատերազմի ժամանակ մարտական հերթապահություն իրականացրած ներքոհիշյալ ուսանողների համար սահմանել տարեկան ուսման վարձի զեղչ 30 %-ի չափով.

Հ/հ	*Ազգանուն, անուն, հայրանուն*	*Մասնագիտ., կուրս*	*ուսդարի*
1	Պետրոսյան Անդրանիկ Արամի	Անտառ. տնտ. - 1	2018-2019
2	Կարապետյան Տիգրան Ժիրայրի	Կենս. անվտ. - 1	2018-2019
3	Շմավոնյան Արթուր Դավիթի	Գյուղ. հումք - 2	2018-2019
4	Ստեփանյան Գրիշա Ստեփանի	Խմորմ. արտ. տեխն. - 2	2018-2019
5	Գրիգորյան Արթուր Արսենի	Խմորմ. արտ. տեխն. - 4	2019-2020
6	Եգանյան Հրաչյա Արմենի	Հողաշին. - 5	2019-2020
7	Մուրադյան Մաքսիմ Վահագնի	Մսի տեխն. - 4	2019-2020
8	Պատուրյան Մնացական Սամվելի	Ֆինանս. - 2	2019-2020

3. ՀԱԱՀ-ի թեստավորման կենտրոնի աշխատանքների ընթացքի վերաբերյալ.

SS կենտրոնի տնօրեն Վ. Մելքոնյանին.

- ներկայացնել փորձարկման համար պատրաստ, ինչպես նաև թերություններով ներկայացված առարկաների ցանկը,

- կազմակերպել թեստերի փորձարկումներ՝ ընդգրկելով համապատասխան ամբիոնների դասախոսներին:

4. Համալսարանի հավատարմագրման գործընթացի հետագա քայլերի, ինչպես նաև ռազմավարական պլանի վերաբերյալ.

Եվս մեկ անգամ քննարկել ՀԱԱՀ ռազմավարական պլանը, ամփոփել ստացված առաջարկությունները և ներկայացնել համալսարանի հոգաբարձուների խորհրդի հաստատմանը:

5. Համալսարանում իրականացվող գույքագրման և հիմնական միջոցների համարակալման ու կոդավորման վերաբերյալ.

5.1. Հանձնարարել ագրոնոմիական ֆակուլտետի դեկան Ա. Տեր-Գրիգորյանին՝ համապատասխան մասնագետներին գործուղել Ա. Քոչինյանի անվ.

գյուղատնտեսական քոլեջ՝ այնտեղ առկա նոր, բայց չօգտագործված սարքավորումների պիտանելիությունը գնահատելու և օգտագործման հնարավոր ոլորտները պարզելու համար:

5.2. Հանձնարարել տնտեսական աշխատանքների գծով պրոռեկտոր Հ. Զաքոյանին՝ գույքագրման գործընթացի ավարտից հետո, սեղմ ժամկետներում, կազմակերպել ոչ պիտանի գույքի դուրս գրման աշխատանքները:

6. Համալսարանի 90-ամյակի հոբելյանական միջոցառումների կազմակերպական աշխատանքների վերաբերյալ.

Հանձնարարել կարիերայի զարգացման և շարունակական կրթության բաժնի վարիչ Լ. Վարդանյանին՝ սեղմ ժամկետում վերլուծել և ամփոփել համալսարանի 90-ամյակի հոբելյանական միջոցառումների կազմակերպական աշխատանքների վերաբերյալ ստացված առաջարկությունները և վերջնական փաստաթուղթը՝ ժամանակացույցի հետ միասին, ներկայացնել միջոցառումների կազմակերպման հանձնաժողովին:

7. Համալսարանի հեռակա ուսուցման դեպարտամենտի ավարտական կուրսերի ուսանողների ուսման վարձավճարի զեղչի վերաբերյալ.

ՀԱԱՀ հեռակա ուսուցման դեպարտամենտի ավարտական կուրսերի ուսանողների ուսման վարձավճարները զեղչել 50 %-ով:

ՌԵԿՏՈՐԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Վ.Է. ՈՒՌՈՒՏՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Գ.Վ. ԱՎԱԳՅԱՆ